6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 16
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2025 թվականի N 559-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆՊՐԱՆԻԿԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ 7
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԻԿ
ԳՈՒՐԳԵՆԻ ԳԶՐԱՐՅԱՆԻ, ՎԱՐԴՈՒՀԻ ԳՐԻՇԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,
ԱՐՈՒՍՅԱԿ ՆՈՐԻԿԻ ԳԶՐԱՐՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ ՆՈՐԻԿԻ ԳԶՐԱՐՅԱՆԻ, ԳԵՂԱՄ
ՆՈՐԻԿԻ ԳԶՐԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՆՇՎԱԾ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.04742 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2 և 3 կետերի պահանջներով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 04.04.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 7 հասցեի գույքի համասեփականատեր Նորիկ Գուրգենի Գգրարյանի /ծնված 03.01.1955թ-ին/ լիազորված անձ /լիազորագիր՝ տրված 21.03.2025թ./ Հակոբ Խաչիկի Մարությանի /ծնված 15.12.1985թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 7 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.045 հա, ինչը փաստացի կազմում է 0.10142 հա, որից 0.05400 հա հողատարածքը օրենքի ուժով հանդիսանում է Նորիկ Գուրգենի Գգրարյանին /ծնված 03.01.1955թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասը, իսկ դրան կից փաստացի ավել օգտագործվող 0.04742 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և ուղղակի վաճառքի կարգով՝ 1 քմ-ի համար հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 366.3 ՀՀ դրամ, օտարել նշված հասցեի գույքի համասեփականատեր Նորիկ Գուրգենի Գգրարյանին /ծնված 03.01.1955թ-ին/ և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 371.90 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1976-2000թթ-ին/ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10142 հա հողամասը չի գտնվում

ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների
ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման
գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 7
հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Նորիկ Գուրգենի Գգրարյանի
/ծնված 03.01.1955թ-ին/, Վարդուհի Գրիշայի Հարությունյանի /ծնված 05.05.1962թ-ին/,
Արուսյակ Նորիկի Գգրարյանի /ծնված 14.02.1981թ-ին/, Գևորգ Նորիկի Գգրարյանի
/ծնված 13.05.1982թ-ին/, Գեղամ Նորիկի Գգրարյանի /ծնված 21.11.1988թ-ին/
հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար
հատկացված 0.045 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.009
հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության
իրավունքը 0.05400 հա մակերեսով հողամասի և օրինական կառուցված 371.90 քմ
մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1976-2000թթ-ին/ նկատմամբ՝ որպես
օրինական տիրապետվող գույք:

2. Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 7 հասցեում
գտնվող 0.05400 հա հողատարածքին կից փաստացի ավել օգտագործվող 0.04742 հա
մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով
Գավառ քաղաք, Զորավար Անդրանիկի 1-ին փողոց, 2-րդ նրբանցք 7/1 հասցեն և
ուղղակի վաճառքի կարգով օտարել Նորիկ Գուրգենի Գգրարյանին /ծնված
03.01.1955թ-ին/, Վարդուհի Գրիշայի Հարությունյանին /ծնված 05.05.1962թ-ին/,
Արուսյակ Նորիկի Գգրարյանին /ծնված 14.02.1981թ-ին/, Գևորգ Նորիկի Գգրարյանին
/ծնված 13.05.1982թ-ին/, Գեղամ Նորիկի Գգրարյանին /ծնված 21.11.1988թ-ին/
հողամասի 1 քմ-ի համար կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 366.3 /երեք հարյուր
վաթսուվեց ամբողջ երեք տասնորդական/ ՀՀ դրամ՝ ընդամենը $474.2 \times 366.3 = 173700$
/մեկ հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ Գավառի
համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին վճարելու պայմանով:

3. Բնակելի տանը տրամադրել Գավառ քաղաք, Զորավար Անդրանիկի 1-ին փողոց, 2-
րդ նրբանցք 7 հասցեն:

4. Հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ օրենքով
սահմանված կարգով Նորիկ Գուրգենի Գգրարյանի /ծնված 03.01.1955թ-ին/,
Վարդուհի Գրիշայի Հարությունյանի /ծնված 05.05.1962թ-ին/, Արուսյակ Նորիկի
Գգրարյանի /ծնված 14.02.1981թ-ին/, Գևորգ Նորիկի Գգրարյանի /ծնված 13.05.1982թ-
ին/, Գեղամ Նորիկի Գգրարյանի /ծնված 21.11.1988թ-ին/ հետ կնքելու 0.04742 հա
մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների
պետական գրանցում կատարելու համար:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ
Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. ապրիլի 17
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2025 թվականի N 560-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ՍԱՅԱԴՅԱՆ ՓՈՂՈՑ 4/1-4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՐԹՈՒՐ
ՂԱԶԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ
ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին», թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը և Գավառ քաղաք Սայադյան փողոց 4/1-4/2 հասցեի սեփականատեր Արթուր Սամվելի Ղազազյանի /ծնված 19.03.1974թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի 05-001-0380-0014 կադաստրային ծածկագրի՝ Արթուր Սամվելի Ղազազյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական թիվ 2619326/ գույքի բաժանումից առաջացած 0.02418 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Զորավար Անդրանիկի փողոց, 3/3 հասցեն:
2. Գավառ համայնքի 05-001-0380-0014 կադաստրային ծածկագրի՝ Արթուր Սամվելի Ղազազյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական թիվ 2619326/ գույքի բաժանումից առաջացած 0.01216 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Զորավար Անդրանիկի փողոց, 3/2 հասցեն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 17
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2025 թվականի N 561-Ա

ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 21.03.2025թ. նիստի արձանագրությունը.

1. Անչափահասներ Նաիրա Գուրգենի Չարչոլյանի /ծնված 30.01.2012թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 169675/, Գրիշա Գուրգենի Չարչոլյանի /ծնված 03.01.2014թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 291583/ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով երեխաների հոր՝ Գուրգեն Գրիշայի Չարչոլյանի /նույնականացման քարտ՝ 014105068, տրված՝ 13.12.2022թ. 009-ի կողմից/ և երեխաների հետ տեսակցության կարգ սահմանել յուրաքանչյուր շաբաթվա շաբաթ օրը, ժամը 10:00-ից մինչև 14:30-ը, երեխաների բնակության վայրի տարածքում, մոր՝ Մելինե Եղիազարյանի ներկայությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 17
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2025 թվականի N 562-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Յուրիկ Սուրենի Նազարյանին, Շուշան Յուրիկի Նազարյանին, Գայանե Կոլյայի Մկրտչյանին, Հայկ Յուրիկի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից հրաժարվելու մասին դիմումը, **որոշում եմ**

1. Քաղաքացիներ Յուրիկ Սուրենի Նազարյանին, Շուշան Յուրիկի Նազարյանին, Գայանե Կոլյայի Մկրտչյանին, Հայկ Յուրիկի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.258 հա մակերեսով 05-056-0348-0155 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 17
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2025 թվականի N 563-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի 1-ին
մասի 6 կետի դրույթներով, առաջարկվում է

1. Հաստատել Գավառի համայնքի համայնքային սոցիալական ծրագիրը՝ համաձայն
հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ղեկավարի 2023 թվականի 29-ը
նոյեմբերի «Համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2153-Ա
որոշումը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 15
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2025 թվականի N 564-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 4-ՐԴ
ՆՐՔԱՆՑՔ 20 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՅՈՎԱ ԱՇՈՏԻ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ, ՌՈԶԱ
ԼՅՈՎԱՅԻ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ, ԳԱՌՆԻԿ ԼՅՈՎԱՅԻ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ, ԱԼՎԱՐԴ
ՍԼԱՎԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Տեղական
ինքնակառավարման Մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ
Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և
գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների
անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/
տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական
գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու
մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»
ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով
02.09.2024թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման
հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի
ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 08.04.2025թ-ին/ գույքի նկատմամբ
ժառանգ Լյովա Աշոտի Ղուրշույանի /ծնված 01.07.1946թ-ին/ դիմումը, «Դավիթ
Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ
քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 4-րդ նրբանցք 20
հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.16 հա, ինչը փաստացի
կազմում է 0.19000 հա, որը Լյովա Աշոտի Ղուրշույանին /ծնված 01.07.1946թ-ին/
ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ
կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.19000 հա հողամասը չի գտնվում
ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների
ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման
գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 4-րդ նրբանցք 20 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Լյովա Աշոտի Ղուրշուդյանի /ծնված 01.07.1946թ-ին/, Ռոզա Լյովայի Ղուրշուդյանի /ծնված 11.07.1972թ-ին/, Գառնիկ Լյովայի Ղուրշուդյանի /ծնված 23.04.1975թ-ին/, Ալվարդ Սլավիկի Կարապետյանի /ծնված 15.05.1976թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.19000 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Հողամասին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 20 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 18
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 565-Ա

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՓԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025թ. մարտի 07-ի օրինական ուժի մեջ մտած վճիռն ու Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 21.04.2025թ. նիստի արձանագրությունը, **որոշում եմ**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025թ. ապրիլի 07-ի օրինական ուժի մեջ մտած վճռով հոգեկան հիվանդության պատճառով անգործունակ ճանաչված չափահաս քաղաքացի Հարություն Ստեփանի Խաչատրյանի /անձնագիր՝ 014905251, տրված՝ 13.04.2023թ. 040-ի կողմից/ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով նրա նկատմամբ սահմանել խնամակալություն:
2. Հարություն Ստեփանի Խաչատրյանի խնամակալ նշանակել նրա մորը՝ Արմինե Մեխակի Սարգսյանին /անձնագիր՝ 010890127, տրված՝ 25.11.2019թ. 040-ի կողմից/ :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. ապրիլի 21
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 566-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ կետով, ՀՀ վարչապետի 2009 թ-ի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Գեղարքունիքի մարզի գեղարքունիք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի վերաբերյալ գլխավոր հատակագծի հաստատման N 2-5 դրական եզրակացության, Գավառ համայնքի ավագանու 11 մարտի 2024 թ-ի թիվ 3 նիստի թիվ 97-Ա որոշմամբ, **որոշում եմ**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գյուղ Նորատուս /կադաստրային ծածկագիր 05-071-0228-0056/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացվող 0.01 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնլ Նորատուս գյուղի գլխավոր հատակագծին, որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսքի և տրամադրել Գավառ համայնք, գ. Նորատուս Մայրուղու Թաղամաս փողոց, թիվ 32/1 հողամաս հասցեն:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 21
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 567-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ ՆՐԲԱՆՑՔ 1/1
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԽԱԿ
ԱՎԵՏԻՔԻ ԴԱՆՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 26 դեկտեմբերի 2002թ-ի N 510-Ն օրենքով, Տեղական
ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ
Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և
գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների
անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/
տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական
գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու
մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին
ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով
19.03.2025թ. տրված Սարուխան համայնքի հողային բարեփոխումների և
սեփականաշնորհման հանձնաժողովի 02.04.1992թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, ըստ
օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 08.04.2025թ./ գույքի
նկատմամբ ժառանգ Մեխակ Ավետիքի Դանոյանի /ծնված 16.02.1961թ./ դիմումը,
«Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների
հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Սարուխան Ե. Չարենցի
փողոց նրբանցք 1/1 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.02
հա, ինչը փաստացի կազմում է 0.04068 հա, որը Մեխակ Ավետիքի Դանոյանին
/ծնված 16.02.1961թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի
առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.04068 հա հողամասը
չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված
սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների
օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Ճանաչել Մելիսակ Ավետիքի Դանոյանի /ծնված 16.02.1961թ./ գույքային իրավունքները Գավառ համայնք գյուղ Սարուխան Ե. Չարենցի փողոց նրբանցք 1/1 հասցեում գտնվող 0.04068 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 2.70 քմ մակերեսով պարսպի /կառուցված 1950թ./ նկատմամբ:
2. 2012-2018թթ. ինքնական կառուցված 70.40 քմ ընդհանուր մակերեսով շինությունները ճանաչել որպես ինքնական շինություններ:
3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Սարուխան, Ե. Չարենցի փողոց, նրբանցք, 1/1 հասցեն:
4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 21
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 568-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Ս. ԶՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ 18
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԽԱԿ
ԱՎԵՏԻՔԻ ԴԱՆՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 19.03.2025թ. տրված Սարուխան համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.04.1992թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 08.04.2025թ./ գույքի նկատմամբ ժառանգ Մեխակ Ավետիքի Դանոյանի /ծնված 16.02.1961թ. դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Սարուխան Ս. Զորյան փողոց 1-ին նրբանցք 18 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.12 հա, ինչը փաստացի կազմում է 0.13726 հա, որը Մեխակ Ավետիքի Դանոյանին /ծնված 16.02.1961թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 13.40 քմ մակերեսով շինության /կառուցված 1984թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.13726 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Սարուխան Ս. Զորյան փողոց 1-ին նրբանցք 18 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մեխակ Ավետիքի Դանոյանի /ծնված 16.02.1961թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.13726 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 13.40 քմ մակերեսով շինության /կառուցված 1984թ./ նկատմամբ՝ որսյես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Սարուխան, Ս. Զորյան փողոց, 1-ին նրբանցք, 18 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 21
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 569-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 6
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ՀՅՈՒՄԻՍ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման Մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնական կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Զանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 08.12.2023թ-ին տրված ինքնական շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների մուտքագրման 2023JPH TZ9 ծածկագիրը, ինքնական կառույցն իրականացրած անձ Հարազատ Գողոյի Գրիգորյանի դիմումը՝ Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ փակուղի թիվ 6 բազմաբնակարան բնակելի շենքից հյուսիս ընկած հատվածում իր կողմից ինքնական կառուցված 31.30 քմ. արտաքին /28,80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ փակուղի թիվ 6 բազմաբնակարան բնակելի շենքից հյուսիս ընկած հատվածում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00313 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 31.30 քմ. արտաքին /28.80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:
2. Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ փակուղի թիվ 6 բազմաբնակարան բնակելի շենքից հյուսիս ընկած հատվածում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00313 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 31.30 քմ. արտաքին /28.80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:
4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ փակուղի թիվ 72 հասցեն:
5. Օրինականացված 31.30 քմ. արտաքին /28.80 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Հարազատ Գողոյի Գրիգորյանին:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2025թ. ապրիլի 21
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 570-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ ՆՐԲԱՆՑՔ 2
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԽԱԿ
ԱՎԵՏԻՔԻ ԴԱՆՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 19.03.2025թ. տրված Սարուխան համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.04.1992թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 08.04.2025թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Մեխակ Ավետիքի Դանոյանի /ծնված 16.02.1961թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Սարուխան Ե. Չարենցի փողոց նրբանցք 2 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.10 հա, ինչը փաստացի կազմում է 0.10439 հա, որը Մեխակ Ավետիքի Դանոյանին /ծնված 16.02.1961թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 233.10 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1956-1980թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10439 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**


1. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Սարուխան Ե. Չարենցի փողոց նրբանցք 2 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մեխակ Ավետիքի Դանոյանի /ծնված 16.02.1961թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.10439 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 233.10 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1956-1980թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Սարուխան, Ե. Չարենցի փողոց, նրբանցք, 2 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 21
ք. Գավառ

